



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

«ՏԻՏԱՆ ՕԻԼ» ՍՊ ընկերություն

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

տնօրեն Վարդան Արարատի Օնանյան

(ղեկավարի անունը, ազգանունը)

ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար-Վ. Փափազյան փողոցների խաչմերուկ

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր N Տ/05-2022-Ա/06

ք. Երևան

«11» նոյեմբերի 2022թ.

**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ (ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԱՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԱՐԳԵԼՄԱՆ**

Տեսչական մարմնի ղեկավարի թիվ Հ/167-2022 հանձնարարագրի հիման վրա Տեսչական մարմնի Երևանի տարածքային բաժնի մասնագետների կողմից 2022 թվականի սեպտեմբերի 8-ից 9-ն ընկած ժամանակահատվածում ստուգում է իրականացվել ՀՀ, ք. Երևան Հ. Քոչար-Վ. Փափազյան փողոցների խաչմերուկում գտնվող «ՏԻՏԱՆ ՕԻԼ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից շահագործվող բենզալցակայանում՝ հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում իրավական ակտերի պահանջների կատարման և պահպանման նկատմամբ:

Ստուգման արդյունքում պարզվել է, որ բենզալցակայանը շահագործվում է հեղուկ վառելիքի պահպանման վերգետնյա տարողություններով, որով էլ խախտված է ՀՀՇՆ 30-01-2014թ-ի կետ 307-ի պահանջները, մասնավորապես՝ բնակավայրերում ավտոմոբիլների հեղուկ վառելանյութի

լիցքավորման կայանները (ԱՀՎԼԿ) պետք է նախատեսել միայն հեղուկ վառելիքի պահման ստորգետնյա պահեստարաններով:

Նշված բենզալցակայանում հայտնաբերվել են նաև այլ խախտումներ, մասնավորապես.

- Հեղուկ վառելիքի ստորգետնյա (փաստացի վերգետնյա) տարողություններով բենզալցակայանից մինչև այլ շենքերի և շինությունների միջև պահանջվող միջտարածությունները պահպանված չեն (հիմք՝ ՀՀՇՆ 30-01-2014, կետ 311),

- Նմուշառում և մակարդակի չափումը չի կատարվում կայծ չառաջացնող նյութերից պատրաստված հարմարանքներով (հիմք՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի՝ 2015 թվականի հունիսի 18-ի «հրդեհային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 595-Ն հրամանի (այսուհետ՝ ՀԱԿ) բաժին VI, գլուխ 28, կետ 352),

- Հրդեհավտանգ հիմնատարերով տանիքների վրայով օդային էլեկտրահաղորդման գծեր և արտաքին էլեկտրագծեր են անցկացված (հիմք՝ ՀԱԿ, բաժին 1, գլուխ 4, կետ 47)

- Բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով (ՀԱԿ, գլուխ 17, կետ 211),

- Բոլոր շինությունների էլեկտրական սարքավորումները համալրված չեն հողանցման համակարգով (հիմք՝ ՀԱԿ, գլուխ 17, կետ 211),

- Արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100խմ. տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով (հիմք՝ ՀՀՇՆ 30-01-2014 գլուխ 16, կետ 308),

- Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին (հիմք՝ ՀԱԿ, բաժին 1, գլուխ 7, կետ 81),

- Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում (հիմք՝ ՀԱԿ, բաժին 1, գլուխ 7, կետ 100),

- Ա, Բ, Վ կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա (հիմք՝ ՀԱԿ, բաժին VIII կետ 512):

Ընկերության կողմից Տեսչական մարմին է ներկայացվել Փորձագետի կողմից տրված և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կազմակերպության կողմից հաստատված 28. 12. 2021 թվականի արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ Ե/3095-21 դրական եզրակացությունը:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով արտադրական վտանգավոր օբյեկտ (այսուհետ նաև՝ ԱՎՕ) են համարվում նավթամթերքների, հեղուկ գազի, բնական (սեղմված) գազի, հաստատուն և շարժական լցավորման կայաններ, գազագլանաանոթային սարքավորումներ, տեխնոլոգիական նպատակներով գազ օգտագործող օբյեկտներ, գազապահեստարաններ:

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում պահպանելով տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությամբ սահմանված պայմանների կատարումը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձագետը (փորձագիտական խումբը) պատասխանատվություն է կրում իր կազմած փորձագիտական եզրակացության հավաստիության համար:

Օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Փորձագետի (փորձագիտական խմբի) կողմից ոչ հավաստի փորձագիտական եզրակացություն կազմելն առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություններ կատարելու մասին թիվ 263-Ն հրամանի 30 կետի համաձայն՝ բնակավայրերում ավտոմոբիլների հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանները (ԱՀՎԼԿ) պետք է նախատեսել միայն հեղուկ վառելիքի պահման ստորգետնյա պահեստարաններով, պահպանելով N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի, ՄՆԻՊ 2.05.13, ՄՆԻՊ II-106 և ՎՄՆ 01 շինարարական նորմերի պահանջները: Ստորգետնյա պահեստարանների միավորի տարողությունը չպետք է գերազանցի 20 մ³, իսկ ընդհանուրը՝ 40 մ³:

Նույն հրամանի 311 կետի համաձայն՝ հեղուկ վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններով ԱՀՎԼԿ-ի հեռավորությունները մինչև մանկական նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, ստացիոնար բուժական հիմնարկների հողամասերի սահմանները կամ բնակելի և հասարակական շենքերի պատերը պետք է ընդունել 50 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունը պետք է որոշել բաշխիչ կետերից և վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններից: Օրական 500-ից ոչ ավելի միայն մարդատար ավտոմոբիլների սպասարկման համար նախատեսված ԱՀՎԼԿ-ի հեռավորությունը մինչև վերը նշված օբյեկտները թույլատրվում է նվազեցնել, բայց ընդունել 25 մ-ից ոչ պակաս:

ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1359-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ ԱՎՕ-ում փորձաքննության իրականացման ընթացքում փորձագետի կողմից ուսումնասիրվում են ԱՎՕ-ի նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագիրը, շահագործվող կամ գործարկման ենթակա ԱՎՕ-ների շենքերը, շինությունները, տեխնոլոգիական սարքավորումները և տեխնիկական միջոցները, որոնք պետք է համապատասխանեն արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, բնակչության հիգիենիկ ու սանիտարահամաճարակային բարեկեցության

ապահովման, շրջակա միջավայրի պահպանման, բնապահպանական անվտանգության, հրդեհային անվտանգության և շինարարական նորմերի, ինչպես նաև գործող ստանդարտների պահանջներին:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի «Տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձևերը հաստատելու մասին» թիվ 108-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատվել է արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

Այսպիսով, փաստվել է, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի «Տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձևերը հաստատելու մասին» թիվ 108-Ն հրամանի թիվ 1 հավելվածով հաստատված արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության ձևի համաձայն՝ «Շենքերը և շինությունները», «Տեխնոլոգիական սարքավորումները», «Տեխնիկական միջոցները» բաժինների համար նախատեսված է ոչ միայն դրանց համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին եզրակացություն, այլ նաև տեխնիկական փաստաթուղթը և դրա համապատասխանության կամ անհամապատասխանության հիմնավորումը: Այսինքն՝ վերոնշյալ բաժիններում առանց տեխնիկական փաստաթղթի համապատասխանության կամ անհամապատասխանության հիմնավորման արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունը խախտում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի «Տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձևերը հաստատելու մասին» թիվ 108-Ն հրամանի թիվ 1 հավելվածով հաստատված արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացության ձևը:

Տվյալ դեպքում 28.12.2021 թվականի արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ Ե/3095-21 դրական եզրակացությունում բացակայում են «Շենքերը և շինությունները», «Տեխնոլոգիական սարքավորումները», «Տեխնիկական միջոցները» բաժինները, իսկ Տեսչական մարմնի Երևանի տարածքային բաժնի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 8-ից 9-ն ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգման արդյունքում 07.10.2022թ. կազմված թիվ Հ/167-2022 ստուգման ակտի համաձայն ՀՀ, ք. Երևան Հ. Քոչար-Վ. Փափազյան փողոցների խաչմերուկում գտնվող «ՏԻՏԱՆ ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից բենզալցակայանը շահագործվում է տեխնիկական և հրդեհային անվտանգության պահանջներ խախտմամբ:

Վերոգրյալից ելնելով՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կազմակերպության փորձագետ Կարեն Գեորգիի Խաչատրյանի (վկայական՝ N 11) կողմից տրված 28.12.2021 թվականի արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ Ե/3095-21 դրական եզրակացությունը ոչ հավաստի է և կասկածի տեղիք է տվել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Տեսչական մարմնի ղեկավարի

17. 10. 2022թ. թիվ S/05-2022-Ա/06 որոշմամբ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կազմակերպության փորձագետ Կարեն Գեորգիի Խաչատրյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի նյութերի և փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կազմակերպության փորձագետ Կարեն Գեորգիի Խաչատրյանի կողմից թույլ տրված վարչական իրավախախտման փաստը, այն է՝ 28. 12. 2021 թվականի արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ Ե/3095-21 դրական եզրակացությունը տրվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին ոչ համապատասխան, ինչից եզրահանգվել է, որ տվյալ փորձագիտական եզրակացությունը ոչ հավաստի է, որի համար «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1359-Ն որոշմամբ և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Տեսչական մարմնի ղեկավարի 11. 11. 2022թ. թիվ S/05-2022-Ա/06/1 որոշմամբ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կազմակերպության փորձագետ Կարեն Գեորգիի Խաչատրյանին ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալից փաստվում է, որ «ՏԻՏԱՆ ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ, ք. Երևան Հ. Քոչար-Վ. Փափազյան փողոցների խաչմերուկում շահագործվող բենզալցակայանին, որպես արտադրական վտանգավոր օբյեկտի, 28. 12. 2021 թվականին տրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ Ե/3095-21 դրական եզրակացությունը ոչ հավաստի է, նշված ԱՎՕ-ն (ԱՎՕ 8/1-1703) չի համապատասխանում տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ կարգադրագիրը տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով և լիազորությունների սահմաններում ընդունված իրավական ակտ է, որն ուղղված է արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման արգելմանը, եթե այն կամ դրանում օգտագործվող տեխնիկական միջոցները, տեխնոլոգիական սարքավորումները, շենքերն ու շինությունները չեն համապատասխանում տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին, արտադրական վտանգավոր օբյեկտը սահմանված կարգով չի անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն կամ չի գրանցվել ռեեստրում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով՝ **ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. **ԴԱԴԱՐԵՑՆԵԼ՝** ՀՀ, ք. Երևան Հ. Քոչար-Վ. Փափազյան փողոցների խաչմերուկում գտնվող «ՏԻՏԱՆ ՕԻԼ» ՍՊ ընկերության կողմից շահագործվող բենզալցակայանի հետագա շահագործումը:

2. Սույն կարգադրագրի կատարման ժամկետ սահմանել՝ կարգադրագիրը ստանալու պահից անհապաղ:

3. Ստացման պահից սկսած՝ 2(երկու) օրվա ընթացքում ամբողջությամբ դատարկել և չեղոքացնել պահեստարաններում առկա վառելիքը:

Ծանոթություն: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրագեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում դրա կատարման մասին տեղյակ պահել կարգադրագիրն արձակած տեսչական մարմնին:

Կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում կարգադրագիրն արձակած տեսչական մարմնին տեղյակ չպահելը համարվում է խախտում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Կարգադրագիրը կարող է բողոքարկվել դատական կարգով:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ կարգադրագրի բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

X
